ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 37, 3, 9, 7, 38 և 17 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով թիվ 37, 3, 9, 7, 38 և 17 (ըստ սահմանադրական դատարան մուտքագրման հաջորդականության) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ընդունած որոշումների հետ կապված վեճերով պատգամավորության թեկնածուները ՀՀ սահմանադրական դատարան են դիմել օրենքով սահմանված ժամկետում, առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 74-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Սամվել Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության։

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Վ. Պողոսյանին։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։

Սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 5-ին, ժամը 10.00-ին։

2. 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Մանուել Գասպարյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության։

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Կ. Բալայանին։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։

Սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 8-ին, ժամը 10.00-ին։

3. 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Լևոն Զուրաբյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության։

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Ա. Խաչատրյանին։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։

Սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 12-ին, ժամը 10.00-ին։

4. 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության։

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Մ. Թոփուզյանին։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։

Սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 15-ին, ժամը 10.00-ին։

5. 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Դավիթ Մաթևոսյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 64 որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության։

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Հ. Նազարյանին։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 19-րդ մասի հիմքով սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 19-ին, ժամը 10.00-ին։

6. 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Գագիկ Ներսիսյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 41-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության։

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Վ. Հովհաննիսյանին։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 19-րդ մասի հիմքով սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 22-ին, ժամը 10.00-ին։

7. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ քննության ընդունված գործերի դատաքննությունը կազմակերպել գրավոր ընթացակարգով։

8. Պահանջել պատասխանող կողմերից՝ համապատասխան գործով գրավոր բացատրությունը ներկայացնել գործի դատաքննությունից առնվազն 7 օր առաջ՝ այն դիմողին

տրամադրելու և դրա առնչությամբ դիմողի նկատառումները նիստից առնվազն երեք օր առաջ դիմողի կողմից սահմանադրական դատարան ներկայացնելու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 մայիսի 2012 թվականի
ՍԴԱՈ-32